

ՀԱՏԸՆՏԻՐ ԷՋԵՐ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒՑ

«ԳԻՐԳ ԲԱՐՈՋՈՒԹԵԱՆ ՈՐ ԿՈՉԻ ԱՄՍՐԱՆ ՀԱՏՈՐ»

(Տպ. Կոստանդնուպոլիս, 1741 թ.)

ՔԱՐՈՋ ՎԱՍՆ ԵՐԿՐԱԳՈՐԾԱՑ

...Այն որ բարի է և արդար վաստակ՝ երկրագործությունն է. որ ի յերկրէ, և ի պտղոց, և ի կենդանեաց, յանասնոց և յալլոցն շահի: Աս ամենեկին բարի է և արդար, և հալալ վաստակ է քրիստն երեսաց ուտել զհացն: Եւ միան ընդդէմ սորա՝ ամենեկիմբ չար, որ բռնութեամբ է և զրկելով, որպէս վաշխն ոսկւոյ և արծաթոյ, և տոկոսիքն ի տուգանաց, և մաքսն, և սոյնպիսիք ամենեկիմբ չար են: Եւ երկրորդ միջակն՝ խառն ի բարւոյ և ի չարէ, որպէս արուեստութիւնն.

հիւանն, դարբինն, ոստայնանկն, բարի է շատն, և սակաւ է չարն, որ կամ զգործսն վատ առնէ, կամ ի նիւթէն զողանայ, և այլն: Իսկ որ առաւել է չարն քան զբարին՝ որպէս ի վաճառանոցն. զի ի վաճառն՝ բազում սուտ լինի և երդումն և զրկումն ի ճարտարութեանէ և յազահութեանէ: Ապա յայտ է՝ որ զերկիր գործելն՝ քան զամենայն ինչ պատուական է՝ որ յԱստուած յուսայ և աշխատի:

(Էջ 112)

ՔԱՐՈՋ ՎԱՍՆ ԼԵՋՈՒԻ

...Ձի ասեն իմաստունք թէ, «Իմաստութեան չափ՝ լռելն է», զի որքան մարդն լռէ և խոկայ զբանն, այնչափ պարզի բանն: Ձի յեօթն փողն խոշակին՝ եօթն անգամ խորհել պարտ է, և որպէս զարծաթ՝ եօթն անգամ յատակել և ապա խօսիլ: Յայնժամ Աստուած հաճի և մարդիկ հաւանին ի զեղեցիկ խօսան, որպէս ասէ առաքեալն. «Ամենայն բանք ձեր՝ իբրև աղիւ համեմեալ լիցին, զի տացէ շնորհս խողացն»: Ապա թէ զայսպիսի ընտրութիւնս ոչ ստանայ, որ զինչ ի բերանն գայ փութապէս խօսի, ամենայնն վնաս և որոգայթ լինի. վասն այն ասէ. «Մահ և կեանք՝ ի ձեռն լեզուի»: Եւ վասն երեք պատճառի՝ մահու պատճառ լինի լեզուն: Նախ զի՝ զիրաշարժ է ի կերպարանել զբանն, և դուրաւ սահի և սխալի: Երկրորդ՝ զի անամօթ է լեզուն, անտես ի մարդկանէ, զամենայն մեծամեծս բարբառի, զոր ինչ ի սրտին է՝ յինքն քարշէ, և ոչ յումեքէ ամաչէ: Երրորդ՝ զի ոչ երկնչի յամբողջ բերանոյն միջոցի գլուղ, ի վերայ՝ ի ներքոյ՝ և ի կողմանէ պարբապեալ, և ատամունքն և շրթունքն՝ դուռն են նմա: Վասն այն զամենայն վնասս խօսի և ոչ երկնչի, թէ զգլուխն ծեծեն, թէ զձեռն կտրեն, ինքն ոչ ցաւի: Եւ զի այսպէս յան-

դուզն և անամօթ է լեզուն՝ մարգարէն Դաւթ ա՛յլ պահապան խնդրէ ասելով. «Դի՛ր, Տէ՛ր, պահապան բերանոյ իմոյ, և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խտրուեսցի սիրտ իմ բանիւ շարութեան»: Ձի որպէս զչար գաղան ի յարգելանոց ձգեն և զդուռն պնդեն, թէ ոչ խաղաղի, զնճիւղով կապեն, նոյնպէս չար լեզուն՝ չար գաղան է մարդոյն, որպէս ասէ առաքեալն. «Ամենայն բնութիւնք գաղանաց և անասնոց հնազանդեալ են մարդկան. այլ զչար լեզուն՝ ոչ ոք կարէ հնազանդել՝ զչարն և զանկարգն և զլին թուօք մահաբերին»: Նա վասն այն արտաքին դուռն ունի զշրթունքն. և ներքին դուռն են ատամունքն. և թէ սոքա ոչ արգիլեն ամուր, յիտնափակ խնդրէ մարգարէն որպէս զզնճիլ գաղանին, այսինքն է՝ զերկիւղն Աստուծոյ. զի երկիւղն Աստուծոյ՝ է սանձ լեզուին, որպէս սանձն ի գլուխն է ձիոյ: Եւ երկու երեսանակ ջիւաւ ունի ձեռքն, և ապա սանձահարի ձին և ուղիղ գնայ: Նոյնպէս իմաստութիւնն՝ սանձ է լեզուին, և երկիւղն Աստուծոյ երեսանակ: Մին երկիւղն աստի տանջանաց, և միան՝ հանդերձելոյն, ապա սանձահարի լեզուն ի չարէ:

(Էջ 220)

«ԳԻՐԳ ԲԱՐՈՋՈՒԹԵԱՆ ՈՐ ԿՈՉԻ ՉՄԵՐԱՆ ՀԱՏՈՐ»

(Տպ. Կոստանդնուպոլիս, 1740 թ.)

ՔԱՐՈՋ ՎԱՍՆ ՏԱՐԵՄՏԻՆ

...Ժողովիմք ի միասին ի սկիզբն տարւոյս, և գոհութեամբ երկրպագութիւն մատուցանեմք Աստուծոյ, որ զանցեալ տարիս խաղաղութեամբ անցոյց ի վերայ մեր, և

աղօթք և խնդրուածք մատուցանեմք նմա՝ որ զմիւս ամս որ գալոց է, խաղաղութեամբ և պարագայց ամօք պահեսցէ:

... Զի յորժամ տեսանեմք որ անցեալ տարին բոլորեցաւ և էանց, ի միտ ասեմք և իմանամք, թե ամենայն կեանք մեր անկաշուն և շարժական է, և ոչ մնացական: Ո՛չ մեծութիւն, ո՛չ փառք, ո՛չ ուրախութիւն, ո՛չ հեշտութիւն և ո՛չ այլ ինչ, այլ ամենայն փոփոխի և գնայ որպէս հին տարին գնաց, զի վասն այն կոշեմք տարի՝ որ զամենայն կեանս մեր և զհեշտութիւն կենցաղոյս ընդ ինքեան տանի և գնայ, և ոչ մնայ առ մեզ: Ապա մի՛ անբանաբար և անհոգութեամբ զբաղիցուք ի կեանս անցաւորս, այլ զբարին գործեսցուք:

... Զայն կամի ցուցանել տարեմուտս տարւոյն, թէ ի միտ ածցուք որ հին տարին էանց՝ նորս մտանէ. խորհնացուք թէ զի՞նչ գործ բարի և ապաշխարութիւն գործեցաք ի յանցեալ աւուրքս և ամբս՝ որ տուեալ են մեզ վասն բարի գործոց և ապաշխարութեան. և մեք ոչ ինչ կարացաք գործել. և ոչ ինչ շահեցաք. զի անցեալ ժամանակն գնաց, և չէ ի միջի. և որ գալոց է՝ չգիտեմք թե զի՞նչ գործիցեմք բարի և եթէ չար: Այսօր զայն պարտ է ի միտ ածել և հոգալ:

... Յորժամ տեսանեմք զժամանակս փոփոխական՝ զի հերոս էանց, և այժմ նոր տարի սկսաւ, և այս ևս անցանելոց է, ի միտ

ածցուք ապա, թէ ոչ է պարտ մեզ անշարժ անփոփոխ մնալ ի սովորական մեղս, ալ զղջմամբ և ապաշխարութեամբ շարժեսցուք ի բարին:

... Արդ՝ այսպէս մեծ է խորհուրդ տարեմտի աւուրքս: Վասն այսորիկ սահմանեցին հարքն զօրս զայս պատուել և մեծարել և ուրախ լինիլ հոգեւոր և մարմնաւոր ուրախութեամբ, որպէս ասէ մարգարէն. «Առէք սաղմոս և տուք օրհնութիւն, աղաղակեցէք առ Աստուած»:

Եւ այս ևս գիտելի է՝ որ տարեմուտ մեր և բազում քրիստոնէից՝ է այժմ ի ձմերան եղանակս, և յամարան, և յաշնան: Արդ՝ յայս պատճառ ասացաւ ի վերոյ թէ, յորժամ հասին հարքն մեր նախնիք. յիւրաքանչիւր տեղիս, զնոյն օրն տարեմուտ կարգեցին:

Արդ՝ նոցա նախնիքն ի գարնան և յամարան և յաշնան և ի ձմերան հասին:

Եւ Հայկն, որ է նախնին մեր, եհաս յայս եղանակս յաշխարհս Հայոց, և զնոյն օրն սահմանեաց տարեմուտ:

Այս և ոչ է առանց խորհրդոյ՝ որ հասեալ տօմարիս առ մեզ, այժմ յեղանակս ձմերան կատարեմք զտարեմուտս մեր:

(Էջ 8—11)

ՔԱՐՈՉ ՎԱՍՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ

Պարտ է գիտել՝ զի ընդունակ ուրախութեան՝ հասակն է երիտասարդութեան, զի ոչ է անկատար որպէս տղայ, և ոչ ծեր և անցեալ զաւուրքք, և վասն հնութեան մերձեալ յապականութիւն: Այլ երիտասարդն երկուց հասակացն ի միջի է, որ քան զտղայն կատարեալ է, և քան զմիւսն նոր և զօրաւոր, և զգալարանքն առողջ՝ և ուժ ի հասակն: Եւ կարող է վայելիլ զկերակրոցն ճշակ, զհանդերձիցն գեղեցկութիւն, ի պատեհաւ զմի արի՛, և յամենայն զբօսանս սնտոի կենցաղոյս՝ միշտ ուրախ է երիտասարդն. վասն այսորիկ զհրեշտակս յայնմ հասակի տեսին որք տեսին: Այլ և նախնի մարդն Ադամ յայնմ հասակի ստեղծաւ, և Յովսէփ և Դաւիթ ի նոյն ժամանակս թագաւորեցին, և Տէր մեր յայնմ հասակի մարմնոյ մկրտեցաւ:

... Եւ ի՞նչ է ուրախութիւնն, այսինքն անարատ կեանք, և անախտ վարս ունելոյ նշանակ: Զի ուր մեղք ոչ է՝ անդ տրտմութիւն ոչ գոյ. վասն այնորիկ առաքեալն ասէ Փիլիպեցոց. «Ուրախ լերուք ի Տէր յամենայն ժամ»:

... Այլ որ առաջիկայ բանս՝ է՛ մեզ պիտանի նախ վասն սրբոց նահատակացն և զօրավարացն հայոց, մեծին Վարդանայ և

ընկերաց նորա, որք ոչ միայն երիտասարդք էին և արի մարմնով, այլ և հոգեւով: Զի ծերն ոչ որ բաղմածամանակեայն է, և ոչ որ թուով ամացն չափեսցի, այլ ասլիք՝ իմաստութիւնն է մարդոյն, որպէս ասէ իմաստունն. «Եւ հասակ ծերութեան՝ կեանք անարատք» և այլն:

Այսպէս և երիտասարդն՝ ոչ միայն որ է ի հասակ մարմնոյն, այլ և որ արի և առոյգ հոգեւով երիտասարդացաւ ի Քրիստոս՝ նոցա ասէ. «Ուրախ լեր, երիտասարդք, որպէս սուրբքս այսոքիկ ուրախ սրտիւ՝ յօժար կամօք՝ միամիտ խորհրդով՝ վասն Քրիստոսի զմահ ի յանձն առին, մեռան մարմնով, և կենդանացան հոգեւով, վասն Քրիստոսի շարժարեցան, և ընդ Քրիստոսի պսակեցան: Անուն և յիշատակ և բարի օրինակ մեզ թողին, և անդ ի յաւիտենից կեանսն ուրախացան՝ և մտին յառազատ անդրանկաց կատարելոց յերկինս: Զինուորեցան Քրիստոսի, և մշտաւէտ ուրախութեանցն, վասն որոյ ասէ իմաստունն իբր ի դէմս խօսելով ընդ բազմահաւաք և համագումար սրբոցն. «Ուրախ լեր, երիտասարդք»:

(Էջ 197—198)

«Գ Ի Բ Բ Հ Ա Ր Յ Մ Ա Ն Յ»


(Տպ. Կոստանդնուպոլիս, 1729 թ.)

ՎԱՍՆ ՅԱՏԿՈՒԹԵԱՆ ԼՈՒՍՆԻ

Հարցումն.— Զի՞նչ է յատկութիւն լուսնի։
Պատասխանի.— Բազում ինչ։ Նախ՝ զի միջա՛կ է արեգակն և աստեղաց։ Ի խոնարհ է։ Սրբնթաց է։ Փոքր է գոտին։ Զամիսս առնէ։ Զգիշերս լուսաւորէ։ Փոփոխակա՛ն է։ Նուազի՛ և բոլորի՛։ Խաւարի՛ մահու և յարութեան է նշան։ Դարձյալ մեղաց և ապաշխարութեան։ Դարձեալ հին օրինացն։ Ընդդէմ երկնիցն շարժի։ Հասարակ և յատուկ շարժութիւն ունի։ Գէճ է և հով։ Ունի բնական լոյս, և յարեգակնէն փոխ առնու

լոյս։ Մերձեալ յարեգակն լուսաւորի, այլ և եղջիւրաւորի։ Եւ հեռացեալ նուազի լոյսն։ Զարեգակն խաւարէ՛։ Ի լուսոյ նորա ծածկի։ Իշխէ՛ տարրական մարմնոց։ Ի ծնունդս ազդէ՛։ Տնկոց սնունդ է։ Ոմանց որակ գունոց տայ, որպէս խնձորոյ, և զոմանց բառնա՛յ, որպէս զմարդոյ։ Հայելի է աշխարհի, ըստ որում ազտ յերեսն երևի։ Զամենայն մոլորակաց զօրութիւն ունի։

(Էջ 186—187)



ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԸ

ՎԱՍՆ ՀԱՆՃԱՐՈՅ

Հարցումն.— Զի՞նչ է հանճարն՝ իմաստութիւն և գիտութիւն։

Պատասխանի.— Նա՛խ՝ հանճարն է՛ բնական իմաստութիւն շնորհական։ Իսկ գիտութիւն է ստացական։ Դարձեալ՝ հանճարն է ի բնականական, գիտութիւնն յուսումնական, և իմաստութիւնն յառողա-

ծարանական։ Դարձեալ՝ հանճարն է ի յարհեստն, իմաստութիւնն ի բանն, և գիտութիւնն առ երկոքինն, այսինքն ի յարհեստն և ի բանն։ Դարձեալ՝ հանճարն է հանդերձելոյն, իմաստութիւնն ներկային, գիտութիւնն անցեալ ժամանակին։ Դարձեալ՝ հանճարն է որոմախոհութեանն, զի կար-



ծիք է կապեալ ըստ ուղիղ խորհրդոյ, իմաստութիւնն իմացմանն, գիտութիւնն յիշողութեանն: Դարձեալ՝ հանճարն է ի գիրս արտաքին, իմաստութիւնն ի Սուրբ Գիրս, գիտութիւնն ի մեկնութիւն նոցին: Դարձեալ՝ հանճարն է ի սկիզբն, իմաստութիւնն ի մէջն, գիտութիւնն ի կատարումն: Դարձեալ՝ իմաստութիւնն է բանին, զի նորա՝ է իմանալն, գիտութիւնն ցասմանն, զի նորա է ընտրելն, և հանճարն ցանկութեանն, զի նորա յանճարն տուիր: Այլ ոմանք ասեն թէ՝ հանճարն ցասմանն է արիւթիւն, և գիտելն ցանկութեանն, ըստ որում «ոչ գիտաց զկին իւր»:

Դարձեալ՝ իմաստութիւնն պատշաճի Հօր ըստ կարողութեան, և գիտութիւնն Որդոյ իբր բան, և հանճարն Հոգւոյն բղխման: Որպէս ասէ իմաստունն, «Աստուած իմաստութեամբ հիմունս էարկ երկրի, խորհրդով և հանճարով իւրով զանդունդս պատահացո: Է և ա՛յլ ուրեք զանազանութիւն

հանճարոյ և իմաստից և յա՛յլ վարդապետաց ասացեալ: Սակայն ա՛յլ եղանակաւ է քան զասացեալս բնականաբար ի մէջն:

Այսպէս ասեն եթէ՝ իմաստութիւն և հանճարն զանազանին:

Զի իմաստութիւնն է ճանաչումն Աստուծոյ բացարձակապէս, իսկ հանճարն է ճանաչումն համեմատաբար, այսինքն համեմատելով զստեղծուածս առ ստեղծողն:

Դարձեալ զանազանութիւն, զի հանճարովն ճանաչի Աստուած լուսաւորութեամբ լսելոցն ի Գիրս Սուրբս, իսկ իմաստութեամբ ճանաչի Աստուած ըստ ինքեան: Դարձեալ՝ հանճարովն ճանաչեմք զԱստուած, ա՛յլ իմաստութեամբն ճանաչեմք զբաղցրութիւն նորա: Դարձեալ ասեն թէ՝ հանճարովն եմք նախատեսք, ա՛յլ իմաստութեամբն հասունք:

Այսքան է առ այս:

(Էջ 270)

ՅԱՂԱԳՍ ՍԻՐՈՅ

Հարցումն.— Զի՞նչ է նշանք սիրոյ:
Պատասխանը.— Բազում ինչ, նա՛խ՝ զի սիրելին յօժարութեամբ լսէ սիրելոյն: Երկրորդ՝ յօժարութեամբ խօսի զնմանէ: Երրորդ՝ բազում անգամ ի միտ ածէ: Չորրորդ՝ առանց ծանօթութեան ծառայէ նմա: Հինգերորդ՝ զմարմինս և զինչս դնէ ի վերայ նորա: Վեցերորդ՝ զգուշանայ ի վիրաւորելոյ զնա: Եօթներորդ՝ թէ վիրաւորեալ է՝ հաշտեցուցանէ զնա: Ութերորդ՝ լինի ցաւակից նմա ի ժամանակի նեղութեան: Իններորդ՝ խնդայ ընդ մերձ գոլն նորա: Տասներորդ՝ ցաւի ընդ հեռանալն նորա: Մետասաներորդ՝ սիրէ զոր ինչ նա: Երկուտասաներորդ՝ ատէ՝ զոր ինչ և նա: Երեքտասաներորդ՝ ջանայ

հաճոյանալ նմա: Չորեքտասաներորդ՝ երկնչի անհաճոյ լինիլ: Հնգեքտասաներորդ՝ քարշէ՝ և զայլս ի սիրելութիւն նորա: Վեցեքտասաներորդ՝ զպարզէս տուեալ ի նմանէ ո՛չ օտարացուցանէ: Եօթնտասաներորդ՝ հաւանի խրատուց նորա: Ութտասաներորդ՝ խնդրէ ի նմանէ համարձակ յուսով: Իննեքտասաներորդ՝ զամենայն ինչ սիրելոյն՝ իւրն համարի, և զիւրն սիրելոյն: Քսաներորդ՝ յամենայն տեղուջ իւր սիրելեան պարծի: Քսանն մի, ի գովելն զնա ուրախ լինի: Քսանն և երկու, որք հայհոյեն զսիրելին՝ խոյս տայ ի նոցանէ: Եւ կարելի է որ որք կամեսցի՝ զայսոսիկ գլուխս ի սէրն Աստուծոյ ուղղել:

(Էջ 575—576)

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ ՆԵՐԲՈՂԵԱՆ

ԱՌ ՔԱՋ ՀՈՒՏՈՐՆ ԵՒ ՏԻԵՋԵՐԱԼՈՑՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ

ՄԵԾՆ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՑԻ ԱՇԱԿԵՐՏ ԹՅԱՆՆՈՒ ԿԱԽԻԿ ԿՈՉԵՑԵԼՈՑ

... Եւ զի թէպէտ ես չեմ բաւական, ա՛յլ մեծաւ փափագանօք բաղձայ սիրտ իմ, ըղձանայ միտս և տենչայ խորհուրդ իմ բարբառիլ բանիւ և դրուատել բան ինչ ներբողենի առ երջանիկ և աշխարհալուր եռամեծ և տիեզերալուոյս հոնտորն քրիստոսատիպ և արթուն անուոն Գրիգոր վարդապետն: Որ էր նա պետ վարժից և տեղյակ իմաստից, տեսակն ցանկալի, և տիպն հրաշալի: Տորդառատ աղբիւրն իմաստից և իմաստուն, վաճառականն, բազմալոյս ճրագն

և պայծառագոյն Արուսեակն: Ամենահոգ տնտեսն և հաւատարիմ ծառայն: Արթուն դոնապանն և զգաստ մատակարարն: Հովիւն արթնական և պահապանն զգուշական: Քաջ մշակն Եկեղեցւոյ Սրբոյ և արդիւնաբար վաստակատուն Գրիգորիս: Երկրորդ լուսաւորիչն տոհմիս Հայկազյան: Որ յայտնեցաւ ի վերջին դարս ի յետին ժամանակս, և յերեկոյացեալ ատուրս, և յաշնանային եղանակս՝ ծաղիկ բազմերանգ գունով փթթեցաւ, լցեալ զտուն Հայոց Մեծաց անմահական:

հոտով, և ոռոգեաց զկորդացեալ երկիրս երկնարուղիս վտակօքն: Եւ արդ՝ ոչ ոք գտաւ համեմատ նմա ի վերջին դարս:

... Թագաւորաց էր խրատիչ, և իշխանաց յանդիմանիչ, մեծատանց էր հրահանգիչ, և ստահակաց սաստիչ: Մեղուցելոց էր քաւիչ, և յանցաւորաց սրբիչ: Մոլորելոց էր դարձուցիչ, և զլորելոցն կանգնիչ: Վիրաւորելոց բժիշկ, վշտացելոց սփոփիչ, և սգաւորաց մխիթարիչ: Քահանայից էր քանոն, և վարդապետաց պարծանք: Ուղղափառաց էր ախոյեան, և հերձուածողաց էր վանիչ: Ապաշխարութեանն քարոզ էր, և մեղօք խաւարելոց լուսաւորիչ: Իմաստասիրաց էր գերագոյն, և փիլիսոփայից վարժապետ, հեռաւորաց էր փափագելի, և մերձաւորացն սխրալի, ստութեան էր վանիչ, և ճշմարտութեան էր ուսուցիչ, հերձուածողաց հալածիչ, և հերետիկոսաց կարկիչ:

... Առաքինի էր վարուքն, աղոթից էր սիրող, ընթերցման էր պարապող, աշակերտաց էր մարզող, աստուածային խորոցն քննող, ծածուկ բանից բացահայտող, Եկեղեցւոյ էր զարդարող, և կանոնաց կապող:

... Անշափ էր սէրն, անբաւ էր գութն, անպատմելի էր խոնարհութիւնն, անձանձիր էր ուսուցանելն, աներկիւղ էր յանդիմանելն, անահ էր սաստելն, աննախանձ էր ի խրատելն, անաշառ էր ի դատելն, անխափան

էր ի պատմելն, առնէր և ապա ուսուցանէր նման Յիսուսի:

... Որ աստուածային շնորհօք էր զարդարեալ, որ աստուածային փառօքն էր շքեղացեալ, որ աստուածային պայծառացեալ, որ յաստուածային բոցոյն էր վարդագունեալ, որ յաստուածային շողոյն էր փարթամացեալ, որ ի տիպն երկնային էր տպաւորեալ:

Եւ արդ, ով եղբարք, ողբասցուք զմեզ թէ յորպիսի տեսող զրկեցաք, և յորքան բարեաց վրիպեցաք: Յորպիսի մեծութենէ աղքատացաք, և յորչափ լաւագոյն հօրէ որբացաք: Յորպիսի վարդապետէ որոշեցաք, և յորքան քաղցրահամ աղբերէ ծարաւ մնացաք: Աւա՛ղ՝ զմեզ զի այլ ոչ տեսանէ քաղցրահայեաց կերպարանն. և այլ ո՛չ բարբառի հրածորան լեզուն: Այլ ո՛չ սերմանէ զարդիւնարար հատն, և այլ ոչ մատուակէ զուրախարար բաժակն անապական: Բայց գոհութիւն զարդարողին զնա, զի թէպէտ և մարմնովն հրածարեցաւ ի մէնջ՝ այլ իմաստութեամբ շողոյն ի մեզ է. թէպէտ և ի տեսութեանց մերոց անջատեցաւ, այլ անտրոհ աղօթիւքն առ մեզ է, թէպէտ և քաջ սերմանողն ննջեաց, այլ սերմանեալն ի նմանէ ինքնին բերէ զպտուղն ըստ բանին Յիսուսի, որում փառք յաւիտեանս ամէն:

(«Քարոզագիրք, Ամարան հատոր», էջ 716—719)

